

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 5/1

1 փետրվարի 2013թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ «ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 15.01.2013թ-ի նիստում քննության է առնվել «Ինժկոմէներգո» ՍՊԸ 19.12.2012թ. թիվ 12/12-10 գրությամբ բերված առարկությունները «ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 22.11.2012թ. թիվ 1002712 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ստուգման ակտը թողնվել է անփոփոխ: Մասնավորապես, համաձայն «ԿԱ ՊԵԿ նախագահի 11.07.2012թ. թիվ 1002712 հանձնարարագրի «Օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում «Ինժկոմէներգո» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող «Օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում 22.11.2012թ-ին կազմվել է թիվ 1002712 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 17.143.468 դրամ, ինչպես նաև 4.624.565 դրամ պակասեցվող ԱԱՀ-ի գումար:

«Ինժկոմէներգո» ՍՊԸ առարկություններում մասնավորապես նշված է.

1. Ստուգման ակտի «ավելացված արժեքի հարկ» բաժնի 1-ին կետի առաջին պարբերության վերաբերյալ.

Արձանագրվել է, որ՝ «...«Ինժկոմէներգո» ՍՊԸ-ն «Ֆոր Դիրեկշնս» ՍՊԸ-ից 2011թ-ի հուլիսի 29-ին ձեռք է բերել թղթային եղանակով դուրս գրված հարկային հաշիվ՝ 27.770.000 դրամի հիմնական միջոց, որի ԱԱՀ-ն կազմում է 5.550.000 դրամ: Համաձայն «ԱԱՀ-ի մասին» «Օրենքի 20 հոդվածի ԱԱՀ վճարող համարվող անձիք հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո՝ մինչև դրան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ, «Կառավարության սահմանված կարգով ներկայացնում են տեղեկանք հաշվետու ժամանակաշրջանում իրենց ձեռք բերված ապրանքների և ծառայությունների դիմաց, մատակարարների դուրս գրած հարկային հաշիվների և իրենց մատակարարած ապրանքների, ինչպես նաև մատուցված ծառայությունների գծով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ: Քանի որ, ընկերությունը վերը նշված ձեռք բերումը չի արտացոլել տեղեկանքում, խախտվել է «ԱԱՀ-ի մասին» «Օրենքի 20-րդ հոդվածի պահանջները, համաձայն «ԱԱՀ-ի մասին» «Օրենքի 43.1 հոդվածի 5.550.000 դրամ ԱԱՀ-ի գումարը ենթակա չէ հաշվանցման:...»:

Հարկային մարմնի կողմից օգտագործված «թղթային եղանակով դուրս գրված հարկային հաշիվ» բառակապակցությունը վերաբերում է փաստաթղթի, որը Լեոնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան դուրս գրված ԱԱՀ-ի և ակցիզային հարկի հաշվանցման համար մի կողմի տարածքից մյուս կողմի տարածք մատակարարվող ապրանքների ու մատուցվող ծառայությունների հատուկ հարկային հաշիվի Ձև 1-ի վրա լրացված 051 սերիայի թիվ 002814 հատուկ հարկային հաշիվ է:

«ԱԱՀ-ի մասին» «Օրենքի 18-րդ հոդվածի համաձայն, հարկային հաշիվ է համարվում նույն օրենքի 20-րդ հոդվածով դուրս գրված և լրացված հաշվարկային թղթային կամ էլեկտրոնային փաստաթուղթը: Նույն օրենքի 20-րդ հոդվածով սահմանվել է, որ ԱԱՀ վճարող համարվող անձինք հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո՝ մինչև դրան հաջորդող ամսվա 20-ը, «Կառավարության սահմանված կարգով ներկայացնում են տեղեկանք հաշվետու ժամանակաշրջանում իրենց ձեռք բերած ապրանքների և ստացված ծառայությունների դիմաց մատակարարների դուրս գրած հարկային հաշիվների և իրենց մատակարարած ապրանքների և մատուցված ծառայությունների գծով դուրս գրված

(գնորդներին տրված) հարկային հաշիվների վերաբերյալ: ՀՀ կառավարությունը 2011թ. հուլիսի 7-ի թիվ 937-Ն որոշմամբ հաստատել է ՀՀ հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանքը հարկային մարմիններին ներկայացնելու կարգ>—ը, որի 1-ին կետով սահմանվում է, որ <...սույն կարգով կանոնակարգվում է ՀՀ Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի (այսուհետև՝ օրենք) 20-րդ հոդվածի պահանջներին համապատասխան դուրս գրված (գնորդներին տրված) և (կամ) մատակարարներից ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանքի...> հարկային մարմին ներկայացման կարգը: Ետևաբար նշված կարգը չի կարող տարածվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գրանցված «Ֆոր Դիրեկշնս» ՍՊԸ-ից 2011թ. հուլիսի 29-ին ձեռք բերված թղթային եղանակով դուրս գրված 051 սերիայի թիվ 002814 հատուկ հարկային հաշվի վրա, քանի որ չկա օրենքով նախատեսված ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգ, որով կկանոնակարգվեր ԼՂՀ օրենսդրության պահանջներին համապատասխան դուրս գրված (գնորդներին տրված) և (կամ) մատակարարներից ստացված հարկային հաշիվների վերաբերյալ հարկային մարմին տեղեկանք ներկայացնելու կարգը: «Ինժկոմվենթո» ՍՊԸ-ն նշված հատուկ հարկային հաշվի վերաբերյալ տեղեկատվությունը հարկային մարմիններին տրամադրել է ոչ թե ՀՀ կառավարության 2011թ.—ի հուլիսի 7-ի թիվ 937-Ն որոշմամբ հաստատված կարգով նախատեսված տեղեկանքով, այլ պատշաճ կերպով հատուկ հարկային հաշվի երկու բնօրինակներից մեկը, 2011թ. օգոստոսի 4-ի գրությանը կից ներկայացրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ:

Նշենք նաև, որ էլեկտրոնային եղանակով տեղեկատվությունը ներկայացնելու պարագայում (Ընկերությունը համաձայն ՀՀ հարկերի մասին> ՀՀ օրենքի 15.1 հոդվածի, պարտավոր է հարկային մարմիններին տեղեկատվությունները ներկայացնել էլեկտրոնային եղանակով) ծրագիրն այն ընդունում է որպես <սխալներով> տեղեկատվություն (ՀՀ-ում և ԼՂՀ-ում տարբեր են սերիաների և համարների գեներացման կարգը), ինչը մեկ անգամ ևս հիմնավորում է, որ պետության կողմից չի նախատեսվել այդ ֆորմատով նշված տեղեկությունների հանձնելը:

Հարկ է նշել նաև, որ Հրազդանի ՏՀՏ կողմից 2011թ. 3-րդ եռամսյակի դուրս գրված և ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունների համադրման կնամերալ ուսումնասիրության արդյունքների արձանագրության Ընկերությանն ուղղարկված հիշեցում-ծանուցումում <այլ անձանց կողմից ներկայացված տեղեկություններով Ձեզ տրամադրված հարկային հաշիվներ, որոնց վերաբերյալ Ձեր կողմից տեղեկություններ չեն ներկայացվել> աղյուսակ 4-ում 051 սերիայի թիվ 002814 հատուկ հարկային հաշիվը ներառված չէ, ինչը փաստում է, որ հարկային մարմինն ընդունել է, որ այդ հատուկ հարկային հաշվի մասին ինքը պատշաճ կերպով ծանուցվել է:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հատուկ հարկային հաշվում առանձնացված 5550000 դրամ ԱԱՀ-ի գումարը ենթակա է հաշվանցման (պակասեցման), քանի որ Ընկերության կողմից չեն խախտվել ՀՀ ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի 20 և 43.1 հոդվածների պահանջները:

2. Ակտի <ավելացված արժեքի հարկ> բաժնի 1-ին կետի երկրորդ պարբերության վերաբերյալ.

Արձանագրվել է, որ՝ <...Ընկերությանը 2011թ.—ի հուլիս, հոկտեմբեր և դեկտեմբեր ամիսներին առանց բանկային փոխանցում կատարելու, ավել ԱԱՀ հաշվանցելու հետևանքով, պակաս հարկ է հաշվարկել համապատասխանաբար՝ հուլիսին 4271660 դրամ, հոկտեմբերին 4928դրամ, դեկտեմբերին 156542դրամ, խախտվել է ՀՀ ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի պահանջները: Ընդամենը ենթակա է գանձման 4433130 դրամ...>:

2011 թ. դեկտեմբեր ամսվա համար արձանագրված 156.542 հազ. դրամը առարկվում է և մեր կողմից ընդունելի չէ, քանի որ այն չի համապատասխանում իրականությանը: Ընկերությունը 2011թ. դեկտեմբերի 14-ին «Ֆլեշ» ՍՊԸ-ից էլեկտրոնային եղանակով ստացել է Ա 467431957 հարկային հաշիվը, որտեղ առանձնացված տողով ԱԱՀ-ն կազմում է 73340 դրամ: 2011թ.—ի դեկտեմբերի 12-ին բանկային փոխանցմամբ «Ֆլեշ» ՍՊԸ-ին վճարվել է

880000 դրամ (այդ թվում դիզ. վառելիքի արժեքը, որն ազատված է ԱԱՀ-ից): Նշված հարկային հաշիվն Ընկերության կողմից ստորագրվել է էլեկտրոնային եղանակով:

2011թ-ի դեկտեմբերի 26-ին <Փ.Աբաջյան> ՍՊԸ-ից էլեկտրոնային եղանակով ստացվել է Ա6386022543 հարկային հաշիվը, որտեղ ԱԱՀ-ն կազմել է 83332 դրամ, որն Ընկերության կողմից ստորագրվել է էլեկտրոնային եղանակով: 2011թ. դեկտեմբերի 27-ին բանկային փոխանցմամբ <Վ.Աբաջյան> ՍՊԸ-ին վճարվել է 499992 դրամ:

Այսպիսով՝ 156.672 դրամ ԱԱՀ-ի գումարը 2011թ. դեկտեմբեր ամսին ենթակա էր հաշվանցման:

3. Ակտի <ավելացված արժեքի հարկ> բաժնի 3-րդ և 4-րդ կետերի վերաբերյալ առարկություններ չունենք:

Այսպիսով, հաշվի առնելով վերը նշվածը, լրացուցիչ գանձման ենթակա հաշվարկված գումարը կկազմի 6.837.613 դրամ, Ընկերությանը ետ վերադարձման ենթակա գումարը՝ 4.624.565 դրամ:

«ՎԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցչի (հաշվապահի) և ստուգման իրականացրած անձանց բերված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ առարկությունները հիմնավոր չեն հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում ընկերության ներկայացուցիչը հայտարարեց, որ ընկերությունը պնդում է միայն ստուգման ակտի 5-րդ կետի 1-ին ենթակետով արձանագրված հետևյալ խախտման վերաբերյալ բերված առարկությունները: Մասնավորապես, ստուգման ակտի 5-րդ կետի 1-ին ենթակետով արձանագրվել է, որ. «Հինժկովենբրգո» ՍՊԸ-ն «Ֆոր Դիրեկշնս» ՍՊԸ-ից 2011թ-ի հուլիսի 29-ին ձեռք է բերել թղթային եղանակով դուրս գրված հարկային հաշիվ՝ 27.770.000 դրամի հիմնական միջոց, որի ԱԱՀ-ն կազմում է 5.550.000 դրամ: Համաձայն «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի ԱԱՀ վճարող համարվող անձիք հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո՝ մինչև դրան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ, ՀՀ կառավարության սահմանված կարգով ներկայացնում են տեղեկանք հաշվետու ժամանակաշրջանում իրենց ձեռք բերված ապրանքների և ծառայությունների դիմաց, մատակարարների դուրս գրած հարկային հաշիվների և իրենց մատակարարած ապրանքների, ինչպես նաև մատուցված ծառայությունների գծով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ: Քանի որ, ընկերությունը վերը նշված ձեռք բերումը չի արտացոլել տեղեկանքում, խախտվել է «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի պահանջները, համաձայն «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի 5.550.000 դրամ ԱԱՀ-ի գումարը ենթակա չէ հաշվանցման»:

Վերոգրյալի խախտման վերաբերյալ հարկ է նշել հետևյալը.

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն. «Սույն օրենքի համաձայն՝ ԱԱՀ վճարող համարվող անձինք հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո՝ մինչև դրան հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ), Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ներկայացնում են տեղեկանք հաշվետու ժամանակաշրջանում իրենց ձեռք բերած ապրանքների և ստացված ծառայությունների դիմաց մատակարարների դուրս գրած հարկային հաշիվների և իրենց մատակարարած ապրանքների և մատուցված ծառայությունների գծով դուրս գրված (գնորդներին տրված) հարկային հաշիվների վերաբերյալ»:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. «Ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված այն հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները, որոնց վերաբերյալ, սույն օրենքի 20 հոդվածին համապատասխան, հարկային մարմին տեղեկություններ (այդ թվում՝ ճշգրտված) չեն ներկայացվել կամ որոնց վերաբերյալ ներկայացված կամ չներկայացված տեղեկությունները չեն համապատասխանում հարկային հաշվում արտացոլված տվյալներին (վավերապայմաններին)՝ հաշվանցման ենթակա չեն»:

Վերոգրյալից հետևում է, որ հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարը հաշվանցվելու համար պարտադիր պայման է հանդիսանում այդ գումարի վերաբերյալ հարկային տեսչություն սահմանված կարգով տեղեկություն ներկայացնելը:

Քննարկվող դեպքում <Ինժեկոմէներգո> ՍՊԸ-ն <Ֆոր Դիրեկշնս> ՍՊԸ-ից ձեռք է բերել 27.770.000 դրամի հիմնական միջոց, որի դիմաց թղթային եղանակով դուրս է գրվել հարկային հաշիվ: Սակայն, խախտելով <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված դրույթներն ընկերության կողմից վերոգրյալ հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարի վերաբերյալ հարկային մարմին տեղեկություն չի ներկայացվել: Հետևապես, ղեկավարվելով <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի 2-րդ պարբերության դրույթներով, հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ն՝ գումարով 5.550.000 դրամ, ենթակա չէր հաշվանցման:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

#### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

S.ԲԱՐՍԵՂՅԱՆ

